հանդէպս կալ և վայելել զմայրական ողորմութիւն մեծի կայսերուհւոյն։ Այլ զանազան խնամս, զոր ածէ ի վերայ մերազնեայց, որք են ի կողմանէդ այդմիկ, լուեալ մեր յոյժ զուարճացաք, իսկ և ակն ունիմք մինչև զբազուկ իւր տարածեսցէ առ բոլոր Հայաստան։

Դարձեալ կրկնապատիկ երանի բազմաշխատ տէրութեանդ, որ բանակակից ես ընդ մեծ իշխանին և աղօթող ըստ մեծի Ներսիսին, որ ի հնումն ժամանակի։ Բայց վասն տարաբախտ վիճակին խմոյ, որ ոչ եղէ ազատանի հաղորդիլ ընդ նմա առ ի կրել զվտանգս պատերազմաց, զորս տէրութիւնդ կրէ, ըստ ասութեան, ուր ոչ գոյ վտանգ մահու, անդ և ոչ գոյ փառք և պատիւ։ Խոնհարական ողջոյն իմ մատուսջիր նմա և ընդհորակալութիւնս վասն խանդակաթ սիրոյ իւրոյ, որ առ հայս, մանաւանդ առ նուաստիս։ Զի որպէս էր ի նախկին գրեցեալ թղթոցս մերոց, թէ որ ոք միանգամ լիցի առաջնորդ այսմ բարւոյ՝ թէ ազնուական ոք իցէ և թէ իշխան, և թէ աղքատ ոք իցէ և թէ տնանկ, ես նուաստս ծառայ հաւատարիմ խոստովանեցայց զիս միշտ նորա, և աղօթող վասն նորա հանապազ։

Թէպէտ ծերացեալ իսկ եմ, սակայն յօժար եմ հեղուլ զարիւն իմ ի ներքոյ ոտից առն այնմիկ, որ կամիցի լինիլ հեղինակ այսմ բարի խորհրդոյս, զի մի ի մահճի մեռանիցիմ իբրև զփափկասուն կողածին, ըստ ասելոյ մեծի և քաջ սպարապետին հայոց Մանուէլին։ Ահա ասէ ի վերայ ազգիս Հայոց այսչափ վէրս ընկալեալ է իմ, այժմ ցաւ է ինձ, զի մեռանիմ ի մահճի և ոչ ի պատերազմի (Նոր պատմութիւն, հատ. Ա, ծանօթութիւն Բ. գրոց, երես էՃԽԳ)։ Ուստի վա՜յ է ինձ, զի ոչ նմին մարմնով վիրաւորեցայ, այլև հոգւով և մտօք։ Քանզի երևի ինձ զի քրմանաջան աշխատանք իմ երեսնամեայ ի դերև ելանին։ Որ նորոգ այսուհետև պարտիմք սպասել դարձեալ ամս ինչ ըստ բանի դերապայծառութեան քում, համապատասխանաւորութիւնս առնել մինչև ցօրն ցայն, երբ զրեսցես նուաստիս, թէ ահա ժամ է և ժամանակ, ել և եկ։

Սակայն ցաւիմ ի սրտէ և ոչ գիտեմ, թէ զինչ արարից վասն անդստին և բնական վաղարկութեան ազգիս Հայոց, զրեթէ յոյժ անագան լիցի մեզ, մինչև կարօղասցուք առ ի գլուխ տանիլ զայս գործ։ Եւ ջանք մեր իբրև զղօղանջումն ցնծղայից, որք ունայնս յարեն ի յունկս լսօղաց, և ծաղր և արհամարանք մարդկան, որք են ի յիւրաքանչիւր տեղեաց։ Զայս ամենայն առթեալ եղև ի սաստիկ արծաթասիրութենէ, որ յաւետ ժանկայարեալ և բթացեալ պահեմք զարկաթ, այսինքն զփափկակեցութիւն առաւել սիրեմք, քան զարիւրարար վարումն կենաց։

Արդ, որպիսի է այս, զի ոչ պատկառիմք երբէք, ըստ որում։ Մարդ ի պատուի էր և ոչ յիմացաւ հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա։ Յաւելեալ ասեմ, զի յօրէ յայնմանէ յորմէ հետէ յաւիտենական փառացն արժանի տէր և կայսրն մեծն Պետրոս, որ կամեցաւ յօժար սրտիւ պաշտպանել զփոքր մասն Հայաստանեայց, նաև յորժամ թուղթ կամ նամակ հղէր առ ընչին հարիւրապետացն Արցախու (կամ ուզրաշեանց) ինքնին ձեռամբ իւրով, խանդակաթ սիրով ստորագրէր զպատուական զանունն իւր, իբրև հասարակ ոմանց, նոյնպէս ողորմած Թագուհիս այս ոչինչ պակաս երևի ի նմանէ խոնհարութեամբ։

Արդ, իսկ և յայնմ ժամանակի ոչ ոք գտաւ ի յազգէն մերմէ յորդորել զիւրայինս ի միաբանութիւն վասն ազնիւ գործոյս այսմիկ, որ էր օգուտ անձանց իւրեանց, այլ ընտրեցին հանգոյն հրէյից ի խաւարի ապիտութեան մնալ տեսլով։ Ահա ՀԵՂ օրինակ՝ սուտ ՀԷՆԷՐալ Ազազարն, յորժամ դարձ արար ի Կիլանայ և եկն ի յԻտուսրստան, մեծն Պետրոս կամեցաւ կարգել զնա ի զօրս իբրև երեսուն հազարաց և առաքել ի Հայաստան։ Իսկ նորա պատասխանի արարեալ արքային այսպէս՝ չպատկառելով թէ ինքն վաճառական է և այլն։ Նմին իրի Իսրայէլ դեսպանն, որ առաքեցաւ ի Սպահան առ շահ Սուլթան Հուսէյն արքայն Պարսից, նա իսկ յորժամ եկն բազում պարգևօք, ասէ ցնա թագաւորն, թէ զի՞նչ տեսիր յաշխարհին Պարսից կամ զի՞նչ բերիր ի թագաւորէ անտի։ Պատասխանեաց Իսրայէլ, թէ քսան